

ՀՏԴ 338.48

## ԶՔՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

### ԳԱՅԱՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա*

Հոդվածում ներկայացվել է զբոսաշրջության առկա վիճակն Արցախում, հիմնական շուկայավարության (մարքեթինգային) քայլերը, քննարկվել են զբոսաշրջային նշանակություն ունեցող կրոնական և պատմամշակութային վայրերը: Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրների համալիր վերլուծության նպատակով իրականացվել է SWOT վերլուծություն, որի արդյունքում կատարվել են մի շարք առաջարկություններ:

**Բանալի բառեր.** զբոսաշրջություն, շուկայավարություն (մարքեթինգ), տեսարժան վայր, SWOT վերլուծություն, Արցախ:

Արցախը համարվում է պատմական Հայաստանի անբաժանելի մասը, այն հայկական երկրորդ պետությունն է: Հաշվի առնելով Արցախի հիմնախնդիրը և երկրի ներկա կարգավիճակը՝ խիստ կարևորվում է տնտեսության զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը: Տնտեսության կարևոր ոլորտներից մեկը զբոսաշրջությունն է, որի զարգացումը Արցախին կբերի ոչ միայն սոցիալ-տնտեսական օգուտ, այլ նաև կնպաստի երկրի միջազգային ճանաչելիության ընդլայնմանը:

Արցախի Հանրապետության բնակչությունը 2018-ին կազմել է 148000 մարդ, որից 83.9 հազարը՝ քաղաքային, 64.1 հազարը՝ գյուղական բնակչությունն է: Բնակչության թվաքանակով առաջատար է Ստեփանակերտը՝ 57,5 հազար մարդ, այնուհետև Մարտունու շրջանը՝ 21,4 հազար մարդ, Մարտակերտի շրջանը՝ 19,8 հազար մարդ [1]:

Ըստ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ԼՂՀ օրենքի՝ զբոսաշրջությունը ճանաչողական, հանգստի, առողջարարական, մարզական, կրոնական, ազգականներին այցելության, մասնագիտական, գործնական և այլ նպատակներով բնակության մշտական վայրից (երկրից) այլ վայր (երկիր) առավելագույնը մինչև մեկ տարի անընդմեջ ժամկետով ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների գործունեությունն է [2]:


Զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝ ճանաչել զբոսաշրջությունը՝ որպես տնտեսության գերակա ճյուղ, աջակցել զբոսաշրջային գործունեությանը և դրա առաջնային ուղղությունների զարգացման համար ստեղծել բարենպաստ

իրավական, տնտեսական, կառուցվածքային պայմաններ, իրականացնել ԼՂՀ-ի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ երկրի նկարագրի ձևավորումը, ստեղծել պայմաններ զբոսաշրջիկների, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների օրինական շահերի և իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար, սահմանել զբոսաշրջության զարգացման գերակա ուղղությունները, իրականացնել զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության զարգացման ապահովումը, աջակցել զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից օրենքով սահմանված կարգով ստեղծված հասարակական միավորումներին [2]:

Արցախում զբոսաշրջության զարգացման համար պատասխանատու մարմինը Արցախի մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությունն է:

2018 թ. Արցախ է այցելել 28588 զբոսաշրջիկ 92 երկրից, նախորդ տարվա 22453 զբոսաշրջիկի (27,3% աճ) և 95 երկրի փոխարեն: Զբոսաշրջիկների 55,5%-ը ժամանել է ՌԴ-ից, 12.2%-ը՝ ԱՄՆ-ից, 3.6%-ը՝ Ֆրանսիայից, 2,3%-ը՝ Գերմանիայից, 2,2%-ը՝ ԻԻՀ-ից, և այլն [3]: 2019թ. Արցախ է այցելել 41963 օտարերկրյա զբոսաշրջիկ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 46.7%-ով: ՌԴ-ից Արցախ է ժամանել 19160, ԱՄՆ-ից՝ 7527, Ֆրանսիայից՝ 1661, Գերմանիայից՝ 765, Լիբանանից՝ 699, Լեհաստանից՝ 685, Չինաստանից՝ 671, Արգենտինայից՝ 594, Կանադայից՝ 575, Սիրիայից՝ 568 զբոսաշրջիկ [4]:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունից Արցախ ժամանող զբոսաշրջիկների թվաքանակը չի հաշվարկվում և հրապարակվում, այնինչ զբոսաշրջության ոլորտի զարգացման վրա միանշանակ մեծ ազդեցություն ունեն նաև Հայաստանից ժամանած զբոսաշրջիկները, որոնք հանգրվանում են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում, օգտվում են հանրային սննդի կետերից, տրանսպորտային ծառայություններից, կատարում են գնումներ, և այլն: Ուստի Արցախի տնտեսության մեջ զբոսաշրջության ներդրումը համակողմանի գնահատելու համար պետք է հաշվարկել նաև Հայաստանից ժամանած զբոսաշրջիկների թվաքանակը և նրանց ծախսած գումարը երկրում:




**Գծապատկեր 1. Արցախի ժամանաձև ներգնա զբոսաշրջիկների թվաքանակը 2009-2019թթ. [5]**

**Գծապատկեր 1**-ի տվյալներից ակնհայտ է, որ տարեցտարի զբոսաշրջիկների թվաքանակն աճել է: Անկում եղել է 2014-ին և 2016-ին՝ 12 և 16%-ով, իսկ 2017թ.՝ կտրուկ աճ՝ 61%-ով: 2014թ. անկումը կարելի է բացատրել նույն թվականի ամռանը սահմանին առկա լարված վիճակով, իսկ 2016 թ. անկումը՝ ապրիլյան քառօրյա պատերազմով:

Կոռելյացիոն վերլուծությունը (2009-2018թթ. տվյալների հիման վրա) ցույց է տվել, որ ներգնա զբոսաշրջիկների թվի և ՀՆԱ-ի միջև Պիրսոնի R գործակիցը 0.821 է, իսկ դետերմինացիայի գործակիցը՝ R<sup>2</sup>-ն՝ 0.674, այսինքն՝ զբոսաշրջիկների թվի փոփոխության ազդեցությունը ՀՆԱ-ի փոփոխության վրա 67% է (տե՛ս **Գծապատկեր 2**):

Զբոսաշրջությունից ստացված ֆինանսական մուտքերն ու ելքերն արտացոլվում են վճարային հաշվեկշռում: Արցախի վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի ապրանքների և ծառայությունների արտահանում և ներմուծում ենթահաշվի ճանապարհորդության բաժինը 2018 թ. գնահատվել է -2227,2 հազար դոլար (կրեդիտ՝ 2284,7 հազար դոլար, դեբետ՝ 4511,9 հազար դոլար) [6]: Այսինքն՝ Արցախի ժամանաձև զբոսաշրջիկներից ստացված գումարը 2018 թ. կազմել է 2284,4 հազար ԱՄՆ դոլար, ուստի յուրաքանչյուր զբոսաշրջիկ միջինը ծախսել է 80 դոլար (2017 թ. մեկ զբոսաշրջիկի միջին ծախսը կազմել է 104 ԱՄՆ դոլար) [7]:

Ըստ Արցախի ԱՎԾ տվյալների՝ կացության և հանրային սննդի ծառայությունների ծավալը 2018թ. կազմել է ընդհանուր ծառայությունների 5,2%-ը (3514.0 մլն դրամ, որից՝ կացության կազմակերպումը՝ 769,3 մլն դրամ, հանրային սննդի կազմակերպումը՝ 2744,7 մլն դրամ), որի 84,6%-ը բաժին է ընկել Ստեփանակերտին, 15,4%-ը՝ Արցախի մյուս շրջաններին [3]:



**Գծապատկեր 2. Կոռելացիոն վերլուծություն ԱՀ զբոսաշրջության և ՀՆԱ-ի միջև**

2019 թ. Արցախում գործել է 92 հյուրանոցային տնտեսության օբյեկտ (<SO>՝ 1930 ննջատեղով: Վերջին տասը տարիների ընթացքում ՀSO-ների թիվն աճել է 5,3 անգամ՝ 17-ից հասնելով 92-ի: 2019 թ. «Տիգրանակերտ» պետական պատմամշակութային արգելոց է այցելել 15095 մարդ: 2019թ. Ստեփանակերտի և Շուշիի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններ են այցելել 1076 զբոսաշրջիկներ: 2019թ. հունիսի 1-ից սեպտեմբերի 1-ը «Tourist bus» ծառայությունից օգտվել է 2254 մարդ [4]: Զբոսաշրջային գործունեության սուբյեկտների թիվը կազմել է 10 կազմակերպություն՝ 9 զբոսաշրջային օպերատոր և 1 զբոսաշրջային գործակալ: Նշենք, որ tourist bus երթուղին գործել է հունիսից օգոստոս ամիսների ուրբաթ, շաբաթ, կիրակի օրերին հետևյալ երթուղիներով և սակագներով՝ Ստեփանակերտ - Նիկոլ Դումանի տուն թանգարան – Գանձասարի վանք - Ստեփանակերտ - 10:00 -13:30 – 250 ՀՀ դրամ, Ստեփանակերտ - Տնջրի ծառ - Տողի մելիքական ապարանք – Տողի Զրաշխարհի - Ստեփանակերտ - 10:00 - 18:00 - 250 ՀՀ դրամ, Ստեփանակերտ - Հունոտի կիրճ - Ստեփանակերտ - 10:00 - 14:00 - 100 ՀՀ դրամ, Ստեփանակերտ - Մայրաբերդ - Տիգրանակերտ- Ստեփանակերտ - 15:00-19:00 -200 ՀՀ դրամ [9]:

2019 թ. հունվար-սեպտեմբերին Արցախի ԱՎԾ-ի կողմից իրականացվել է ընտրանքային հետազոտություն, որին մասնակցել են ԱՀ այցելած 393 (մեկնող) և ԱՀ-ից մեկնած 305 (ժամանող) զբոսաշրջիկ: Հարցմանը մասնակցած ԱՀ այցելած 393 զբոսաշրջիկները եղել են 41 երկրից, և նրանց 69.7%-ն ունեցել է հայկական ծագում, 116-ը եղել են Ռուսաստանից (որից 90-ը՝ հայկական ծագում ունեցող), 107-ը՝ Հայաստանից, 27-ը՝ ԱՄՆ-ից: Հարցման մասնակիցների մեծամասնությունը՝ 53.4%-ը կամ 210 զբոսաշրջիկ, նախկինում այցելել են Արցախ, ընդ որում՝ դրանց գերակշիռ

մասը՝ 49.0%-ը, այցելել են երեք և ավելի անգամ, 18.1%-ը՝ երկու անգամ, իսկ 32.9%-ը՝ ընդամենը մեկ անգամ:

Հարցմանը մասնակցած ժամանող 305 զբոսաշրջիկները Արցախից մեկնել են աշխարհի 18 երկրներ ու ամենաշատն այցելել են ՀՀ (35.8%-ը), Վրաստան (23.3%-ը), ՌԴ (20.0%-ը) և Եգիպտոս (9.8%-ը):

Հարցմանը մասնակցած ԱՀ այցելած 393 զբոսաշրջիկների 35.4%-ը ԱՀ են ժամանել մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցության, 28.0%-ը՝ հանգստի և ժամանցի, 23.9%-ը՝ հարազատներին և ընկերներին այցելելու նպատակներով: Արցախն ընտրելու հիմնական պատճառն ըստ մասնակիցների 29.6%-ի եղել է մշակույթն ու պատմությունը, իսկ ըստ 31.1%-ի՝ բնությունն ու տեսարժան վայրերը, որպես այլ նպատակ նշվել է հարազատներին և ընկերներին տեսակցելը և հարազատ հանգրվանում հանգստանալը: Հարցվածների միայն 9.1%-ն է այցելել Արցախ մասնագիտական շրջագայության, 3.5%-ը՝ ուխտագնացության նպատակով, իսկ 4.0%-ին գրավել է Արցախի հիմնախնդիրը: Այլ պատճառ նշածների 4.8%-ը ժամանել է Արցախ ֆուտբոլի, իսկ 2.3%-ը համահայկական խաղերի պատճառով:

Հարցմանը մասնակցած ԱՀ այցելած 393 զբոսաշրջիկների 57.5%-ը մնացել են հյուրանոցում, 29.5%-ը՝ բարեկամի կամ ընկերոջ տանը: Հարցմանը մասնակցածների 90.8%-ն այցելել են Ստեփանակերտ, 74.6%-ը՝ Շուշի և 55.7%-ը՝ Գանձասար, 22.4%-ը՝ Տիգրանակերտ: Հարցմանը մասնակցածների 71.0%-ն իրենց ճանապարհորդությունը կազմակերպել են ինքնուրույն, 29.0%-ը՝ ըստ տուր-փաթեթի: Ըստ հարցման արդյունքների՝ ԱՀ այցելած մեկ զբոսաշրջիկը միջին հաշվով ծախսել է 102646.4 դրամ:

Հարցվողները գնահատել են նաև ծառայությունները և հարմարությունները: Ամենացածր գնահատականին արժանացել են ներքին ճանապարհները 3,0 բալ (միջին) և գների մակարդակը՝ 3.6 բալ (միջին), իսկ ամենաբարձրին՝ տեսարժան վայրերը՝ 4.5 բալ (լավ):

Զբոսաշրջիկների կողմից կատարվել են առաջարկություններ՝ զբոսաշրջության ոլորտի բարելավման նպատակով, որոնց մեջ կարևորվել են՝ արցախցու բարեկեցությունը, տրանսպորտային և հյուրանոցային ծառայությունների մակարդակի բարձրացումը, մարզամշակութային, զվարճանքի ու տեսարժան վայրերի ավելացումը և բարելավումը, ճանապարհների բարելավումը ու գների մատչելիության ապահովումը:

Հարցմանը մասնակցած ԱՀ այցելած 393 զբոսաշրջիկներից 26-ը կամ 6.6%-ը պատասխանել է, որ հաջորդ տարիներին չեն այցելելու Արցախ, քանի որ այցելությունը թանկարժեք է և մեկ այցելությունը բավարար է Արցախը ճանաչելու համար, իսկ 90.8%-ը նշել է, որ հնարավոր

է հաջորդ տարիներին ևս այցելի Արցախ, 94.9%-ը՝ ընկերներին և հարազատներին ևս խորհուրդ կտա այցելել Արցախ: Ըստ 94.9%-ի՝ արցախցիները հյուրասեր են [10]:

2018-2019 թթ. հիմնական շուկայավարության աշխատանքներն են եղել՝ շուկայավարության (նաև թվային) պլանների կազմում, մասնակցություն զբոսաշրջային ցուցահանդեսներին (Մադրիդ, Մոսկվա, Երևան, Լոնդոն), զբոսաշրջային գրականության տպագրություն, վեբ կայքի ստեղծում և զարգացում, կոնտենտի և լուսանկարների թարմացում, սոցիալական կայքերում ամենօրյա աշխատանք, համացանցում գովազդի տեղադրում՝ ուղղված ՀՀ, ՌԴ, ԱՄՆ, Եվրոպա (SMM աշխատանքներ), Արցախի մասին նյութերի տպագրություն ամսագրերում, հայտնի բլոգերների և լրագրողների այցելություններ Արցախ, FAM trip Հայաստանի զբոսաշրջային օպերատորների համար, աշխատանքներ միջազգային զբոսաշրջային ընկերությունների հետ, աշխատանքներ տարբեր զբոսաշրջային ծրագրերի շուրջ (քարտեզներ, կայքեր և այլ): Կան տպագրված 5 քարտեզ՝ ԱՀ-ի, Ստեփանակերտի և Շուշիի, Հունոտի կիրճի, Տոլ գյուղի, Տիգրանակերտի [9]:

2019 թ. Արցախի պետական բյուջեից զբոսաշրջության զարգացման համար տրամադրվել է 25 մլն դրամ [11], 2020թ. նախատեսված է 28 մլն դրամ [12]:

Արցախում գյուղական զբոսաշրջության զարգացման նպատակով կազմվել է «Գյուղական զբոսաշրջության զարգացման հայեցակարգ»: Դրա շրջանակներում շեշտադրումը դրվում է գյուղական համայնքներում հյուրատնային գործունեության զարգացմանը: Ներկայում մշակման փուլում են «Մելիքների ուղի» թեմատիկ զբոսաշրջային երթուղու, «Գինու ուղիներ» երթուղու զարգացման ծրագրերը:

Արկածային զբոսաշրջության զարգացման գործում մեծ դերակատարություն ունի «Ճանապարհ թրեյլ» ծրագիրը, որն ընդգրկում է արահետների բարեկարգման, գծանշման, որոշ հատվածներում նոր արահետների ստեղծման և մաքրման աշխատանքներ [9]:

Ամենամյա ձևաչափով և արդեն իսկ կայացած միջոցառումներից են «Արցախի գինու փառատոնը», որը կազմակերպվում է սեպտեմբերին Տոլ գյուղում, ամռանը կազմակերպվող «Արցախի օդային փառատոնը», Ստեփանակերտում նշվող «Բերքի տոնը», Հաթերք գյուղում անցկացվող «Ժենգյալով հացի փառատոնը» և այլն [13]:

Համառոտ անդրադառնանք Արցախի զբոսաշրջային գրավչություն ունեցող տեսարժան վայրերին, որոնց հիման վրա Արցախում կարող են զարգանալ զբոսաշրջության պատմամշակութային, կրոնական, առողջա-

րանային, ագրո- և էկո-, քաղաքային, մարզական և արկածային, հնագիտական, գաստրոնոմիական, և այլ տեսակներ:

Արցախի տարածքի հյուսիսային մասում արևմուտքից արևելք ձգվում է Մռավի լեռնաշղթան, որի ամենաբարձր գագաթը Գոմշասարն է [14]: Հանրապետության արևմտյան մասում՝ հյուսիս-արևմուտք-հարավ-արևելք ուղղությամբ ձգվում է Արցախի (Ղարաբաղի) լեռնաշղթան: Դրա ամենաբարձր գագաթը Կուսանաց լեռն է:

«**Հունտրի կիրճ**» պետական բնապատմական արգելոցն ունի աննման գեղեցկություն: Ջրդուրի ամենաբարձր կետից երևում է կիրճի 250մ բարձրությամբ պատերը, որոնք վեր են խոյանում բերդաքաղաք Շուշիի հարավարևմտյան մասում գտնվող Կարկառ գետի վրա: **Մամուր քար** ջրվեժն ավելի հայտնի է Հովանոցներ անվանումով: Այն Հունտրի կիրճի անկրկնելի զարդերից մեկն է՝ հսկա մամուռները բնական անձրևանոցների դեր են տանում քարերից թափվող սառնորակ ջրերի հաճույքը վայելող զբոսաշրջիկների համար [15]: «Հունտրի կիրճ»-ում է գտնվում **Ալեքսանա Ղուզե քարանձավը** Քարինտակ գյուղի հարավ-արևմուտքում՝ Ջառ գետի ձախ ափին: Այս քարանձավն ունի մոտ 50 մ խորություն և շուրջ 7 առանձնացած սրահներ: Բնակեցված լինելով հեղինակական դարաշրջանում՝ Ք.ա. 1-ին դարից մինչև մ. թ. 1-ին դարը, քարանձավը հեթանոսական պաշտամունքի վայր է եղել: Այսօր այն Արցախում բնակվող սպիտակաթև չղջիկների միակ հանգրվանն է [16]:

**Քարանձավ Ավանա Կարանը** գտնվում է Շուշիի հարավ-արևմուտքում՝ դժվարանցանելի մի վայրում, որը կոչվում է Ավանի Քերծ: Քարանձավն ունի մոտ 75 մ խորություն և մինչև 15 մ հասնող լայնություն, իսկ բարձրությունը՝ 7-10 մ է [17]:

**Ազդիսի քարանձավը** գտնվում է Հադրութի շրջանի Ազդիս և Դրախտիկ գյուղերի միջև, հանդիսանում է քարի դարի Կովկասյան բնակավայրերից հնագույններից մեկը: Այս հնագույն հուշարձանը ունեցել է մուտքեր և ելքեր վեց բավիղանման սրահներից: Ամենամեծ սրահը զբաղեցնում է 3000քմ մակերես: Այստեղ, աշելյան մշակութային դարաշրջանի շերտում, առաջին անգամ են հայտնաբերվել բուսական և կենդանական աշխարհների բրածո մնացորդներ, նախնադարյան արվեստի հետքեր, քարե գործիքներ, որոնց տարիքը գերազանցում է 700000 տարին: Մուտքի մոտ, 7մ խորության վրա, հնէաբանները հայտնաբերել են մուստերյան դարաշրջանի նեանդերթալցու վերին ծնոտի բեկոր: Մինչ այդ նեանդերթալցու մնացորդներ հայտնաբերվել են Սիդի Աբդուրախամանում (Մարոկկո), Շտեյնխեյմում (Գերմանիա), Սպանոկոմբում (Անգլիա) և Սեդիադել Դիաբոլում (Իտալիա) [18]:

Շահումյանի շրջանում է գտնվում **Տաք ջուր** առողջարանային ավանը, 2200-2400 մ բարձրության վրա, Թարթառ գետի ափին, Քարավաճառից

դեպի հարավ: Տաք ջուրը հարուստ է բնական տաք աղբյուրներով, ունի բուժական հատկություններ և բաղադրությամբ նման է Կարլովի Վարի (Չեխիա) և Ջերմուկի հանքային ջրերին [19]:

**Կաչաղակաբերդ ժայռագագաթ բնության հուշարձանը** գտնվում է Արցախի Ասկերանի շրջանի Պատարա և Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղերի միջև գտնվող ժայռագագաթում՝ ծովի մակարդակից 1706 մ բարձրության վրա: Ժայռագագաթը Կաչաղակաբերդ կոչել է ժողովուրդը, քանի որ միայն թռչունները կարող են նվաճել նրա բարձունքները [20]:

**Տարիկ-Պապիկ** հուշարձանը՝ «Մենք ենք, մեր սարերը», տեղադրվել է 1967 թ., գտնվում է բլրի գագաթին: Այն խորհրդանշում է արցախյան հողի և ժողովրդի արմատների միջև արյունակցական կապը [21]:

Արցախի հրաշալիքներից է մոտ 2040 տարեկան **Տնջրի ծառը**: Այն գտնվում է Ստեփանակերտից 37 կմ հեռավորությամբ, Մարտունի վարչական շրջանում, Սխտորաշեն գյուղի հանդամասում և անգամ անձնագիր ունի՝ որպես ԽՍՀՄ տարածքի ամենատարեց և ամենաբարձր ծառ: Ծառն ունի 54 մ-ից ավելի բարձրություն, բնի շրջագիծը 27 մ է, ծառի փչակի մակերեսը 44 քմ է, այստեղ կարող է տեղավերվել 100-ից ավել մարդ, իսկ սաղարթների ստվերի մակերեսը զբաղեցնում է համարյա 1400 քմ տարածք: Ծառի տակից բխում է մի հորդառատ, սառնորակ աղբյուր՝ Տնջրու աղբյուրը [22]:

**«Տողի մելիքական ապարանք» պատմամշակութային արգելոցի** Սուրբ Հովհաննես եկեղեցուց հյուսիս գտնվող միջնադարյան դամբարանադաշտում հնագիտական աշխատանքների ժամանակ գտնվել են տապանաքարեր, որոնց մեջ կան նաև Դիզակի հայտնի մելիքների տապաններ [23]: «Տողի Մելիքական ապարանք»-ում 2019թ. սեպտեմբերին կազմակերպվել է արցախյան գինու՝ արդեն 6-րդ ավանդական դարձած փառատոնը, որին մասնակցել է շուրջ 30 գինեգործ [24]:

Քրիստոնեությունն Արցախ է ներթափանցել դեռևս մ.թ. 1-ին դարում: Արցախը հարուստ է կրոնական զբոսաշրջության վայրերով, որոնք կարող են գրավել կրոնական զբոսաշրջիկներին: Ուխտագնացության հիմնական կենտրոններ են համարվում **Գանձասարը**, որտեղ թաղված է քրիստոնեական աշխարհի գլխավոր սրբություններից մեկի՝ Հովհաննես Մկրտիչի գլուխը, **Դադիվանքը**, որը կառուցված է Թադևոս Առաքյալի աշակերտներից մեկի՝ Դադիի գերեզմանատեղում, **Ամարասի և Եղիշե Առաքյալի վանքերը**, կառուցված համապատասխանաբար Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսի և Եղիշե Առաքյալի դամբարանների վրա: Ամարասի վանքում թաղված են նաև Սուրբ Զաքարեի և Սուրբ Բարդուղիմեոսի մասունքները [25], Շուշիի **Կանաչ ժամ** կամ **Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին**, **Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին**, Ստեփանակերտի **Սուրբ Հակոբ**



**Եկեղեցին:** 2019 թ. ապրիլի 7-ին տեղի ունեցավ Ստեփանակերտի **Ս. Աստվածամոր Հովանի** եկեղեցու (բարձրությունն ավելի քան 40 մ) օծումը [26]:

Արցախում կան մզկիթներ, որոնք կրոնական զբոսաշրջության տեսանկյունից կարող են գրավել մուսուլմաններին: Դրանցից են Շուշիում 1883թ. կառուցված Գյուվհար Աղայի Ներքին և Վերին մզկիթները: Վերին մզկիթի վերականգնման նախագծային աշխատանքներին մասնակցել են իրանցի մասնագետներ: Մզկիթը վերաբացվել է 2019թ. հոկտեմբերին: Մյուս մզկիթը գտնվում է Աղդամում և կառուցվել է 1870 թ.: Չնայած որոշ չափով տուժել է պատերազմական գործողություններից, բայց գտնվում է տանելի վիճակում:

Արցախում զարգացման մեծ հեռանկարներ ունի էկոզբոսաշրջությունը: 2018թ. մայիսին ԱՀ կառավարությունը որոշում ընդունեց ստեղծել «Կանաչ Արցախ» կենսոլորտային համալիր և դրանում ներառել նոր ստեղծվող «Կովսական» պետական արգելոցը, «Սոսիների պուրակ» պետական արգելավայրը և «Կաչաղակաբերդ» ազգային պարկը: «Կանաչ Արցախ»-ի գործունեության առարկան և նպատակը վերոնշյալ երեք տարածքների բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, բնության տարեգրության վարման, և դրանց պաշարների կայուն օգտագործման ապահովումն է [27]:

ԱՀ-ում կան երկրաբանական և երկրաձևաբանական, ջրագրական, ջրաերկրաբանական, կենսաբանական, բնապատմական հուշարձաններ [28]: Նշենք սակայն, որ էկոզբոսաշրջության զարգացման ծրագրեր, սահմանված էկոզբոսաշրջային երթուղիներ դեռ չկան, ինչպես նաև առանձին չի հաշվարկվում էկոզբոսաշրջիկների թվաքանակն այս տարածքներում:

Արցախն ունի համեղ խոհանոց, ինչի շնորհիվ կարող է զարգացնել նաև գաստրոնոմիական զբոսաշրջությունը: Արցախի առավել հայտնի ազգային ճաշատեսակներն են՝ ժենգլավով հացը, խոխոբը (բաղադրիչներն են՝ հավի կամ ոչխարի միս, գլուխ սոխ, նռան հատիկներ, կարագ, համեմունքներ), կորկոտը (աղացած ձավարն ու խոզի յուղոտ միսը աղով և ջրով եփում են 6-7 ժամ), կոլոնդրակը կամ ձնագնդիկը (բաղադրիչներն են՝ փոխինձ, մեղր, չիր):

Արցախի զբոսաշրջության զարգացման համալիր վերլուծության նպատակով իրականացրել ենք SWOT վերլուծություն:

**Աղյուսակ 1**

**Արցախի զբոսաշրջության զարգացման SWOT վերլուծություն**

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր	Հնարավորություններ	Սպառնալիքներ
Կրոնական զբոսաշրջության վայրեր	Հայաստանից այցելող զբոսաշրջիկների վիճակագրական հաշվառման բացակայություն	Զբոսաշրջության տարբեր տեսակների զարգացման ծրագրերի մշակում	Լարված հարաբերություններ հարևան Ադրբեջանի հետ
Հին պատմություն և մշակույթ	Ձմռանը զբոսաշրջային տուրերի պակաս	Վիճակագրական հաշվառման բարելավում	Արտերկրի հետ օդային կապի բացակայություն
Համեղ ազգային խոհանոց	Ժամանցն անցկացնելու համար զվարճանքի վայրերի բացակայություն	Զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավում	Աղքատության մակարդակ
Բնակչության հյուրընկալ վերաբերմունք	Զբոսաշրջային տեղեկատվության պակաս	Տուրերի կազմակերպում տարվա բոլոր եղանակներին	Միջազգային ճանաչելիության խնդիր
Թանգարանների առկայություն	Ստեփանակերտի և Երևանի ավտոկայաններում տեղեկատվության ոչ պատշաճ ներկայացում	Շուկայավարության գործունեության բարելավում	Արտագաղթ
Բազմամշակութային ժառանգություն	Ինտերնետ կապի քիչ տարածվածություն	Հայաստանի հետ միասին տուր փաթեթների կազմում	
Փառատոների կազմակերպում		Զբոսաշրջության կրթական և գիտական գործունեության բարելավում	

Հաշվի առնելով առկա խնդիրները՝ կարող ենք նշել, որ զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը.

✓ Հայաստանից այցելող զբոսաշրջիկների վիճակագրական հաշվառում: Առհասարակ սահմանային անցման կետում բոլոր այցելուների անձնագրի ստուգումը կարևոր է ինչպես ազգային անվտանգության տեսանկյունից, այնպես էլ զբոսաշրջության տնտեսական օգուտի հաշվառման իրականացման տեսանկյունից: Այս առումով պետք է նշել, որ ՀՀ-ում զբոսաշրջության վիճակագրության բարելավման նպատակով ներդրման փուլում է սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգը (ՍԷԿՏ), ինչը թույլ կտա ստանալ ճշգրիտ տվյալներ ժամանող զբոսաշրջիկների տարիքի, սեռի, քաղաքացիության, կրկնական այցելությունների վերաբերյալ: Կարծում ենք՝ նման համակարգի ներդրումն անհրաժեշտ է նաև Արցախում: Այս դեպքում պարզապես անհրաժեշտ է սահմանային անցման կետում ստուգել բոլոր ժամանողների (այդ թվում՝

ՀՀ քաղաքացիների) անձնագրերը և համապատասխան համակարգչային ծրագիր մուտք անել անձի քաղաքացիության, սեռի, տարիքի վերաբերյալ տեղեկատվությունը, նաև կարճ հարցում անել այցելության նպատակի մասին: Արդյունքում հնարավոր կլինի նաև հաշվառել ՀՀ-ից ժամանող զբոսաշրջիկներին, ինչը թույլ կտա իրականացնել ավելի ճշգրիտ հետազոտություններ և գնահատել զբոսաշրջության ֆինանսական օգուտը տնտեսության մեջ,

✓ ՀՀ-ից ժամանող զբոսաշրջիկների հաշվառմանը կարող է նպաստել նաև հյուրանոցային տնտեսության օբյեկտների տրամադրած տեղեկատվությունը: Ճիշտ է, շատերը կարող են հանգրվանել հարազատների և բարեկամների տանը, բայց ՀՏՕ-ներում հանգրվանող ՀՀ զբոսաշրջիկները ևս մեծ թիվ են կազմում, ուստի ՀՏՕ-ների կողմից նրանց թվաքանակի հաշվարկումը և տրամադրումը ևս էական նշանակություն կունենա վիճակագրության բարելավման համար,

✓ ժամանցն անցկացնելու վայրերի ավելացում (թատրոններ, կինոթատրոններ, զվարճանքի վայրեր),

✓ փառատոնների կազմակերպման աշխարհագրության ընդլայնում՝ տարբեր տարածքների (հատկապես սահմանամերձ) սոցիալ-տնտեսական զարգացման համար: Փառատոնները կարող են լինել ինչպես գաստրոնոմիական, այնպես էլ մշակութային ուղղվածությամբ,

✓ զբոսաշրջային տեղեկատվության հասանելիության մեծացում,

✓ ակտիվ շուկայական գործունեության իրականացում՝ մասնակցություն զբոսաշրջային ցուցահանդեսներին՝ ՀՀ-ում և արտերկրում, տարբեր երկրներից լրագրողների ճանաչողական այցերի կազմակերպում, որից հետո նրանք կնկարահանեն և կտպագրեն նյութեր Արցախի զբոսաշրջային վայրերի վերաբերյալ, թվային շուկայավարության իրականացում: Լավ շուկայավարության համար առավել արդյունավետ կլինի աշխարհահռչակ մարդկանց մասնակցությամբ գովազդների կազմակերպումը, ովքեր կարող են Արցախում ներկայացնել զբոսաշրջային հիմնական ակտիվները և ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստել Արցախի ճանաչելիության բարձրացմանը (օրինակ՝ հայտնի հայեր Քիմ Քարդաշյանը, Հենրիխ Մխիթարյանը, Սերժ Թանկյանը և այլք, եթե մասնակցեն Արցախում ինչ-որ փառատոնի, կամ այլ միջոցառման՝ ուղղակիորեն կամ անուղ-

ղակիորեն կնպաստեն Արցախի ճանաչելիության մեծացմանը): Այս դեպքում պետք է կիրառել Buzz Marketing և Word of mouth շուկայավարության ռազմավարությունները՝ օգտագործելով հայտնի հայերի ազդեցությունը (influencers) իրենց երկրպագուների և հետևորդների վրա,

✓ զբոսաշրջային ենթակառուցվածքների, զբոսաշրջային ծառայությունների գին-որակ ցուցանիշների բարելավում,

✓ ոլորտի գիտական կադրերի պատրաստում, աշխատուժի վերապատրաստում՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան,

✓ զբոսաշրջության տարբեր տեսակների՝ պատմամշակութային, կրոնական, արկածային, գաստրոնոմիական, պատերազմական, գյուղական, բնապահպանական, զարգացման ռազմավարական ծրագրերի մշակում՝ հաշվի առնելով առկա ներուժը և մշակելով տարբեր երթուղիներ,

✓ զբոսաշրջության տարբեր տեսակների տուրերի մշակում Հայաստանի հետ միասին, այսինքն՝ միջազգային զբոսաշրջիկները կարող են այցելել ՀՀ և ԱՀ տուրերի: Տուրերը կարող են առաջարկել զբոսաշրջության տարբեր տեսակներ առանձին-առանձին, ինչպես նաև համատեղ: Մեր կողմից ներկայացվել են զբոսաշրջային գրավչություն ունեցող որոշ վայրեր, պատմամշակութային օբյեկտներ: Դրանց, ինչպես նաև այլ օբյեկտների ներգրավմամբ կարելի է ստեղծել հետաքրքիր զբոսաշրջային փաթեթ-առաջարկներ՝ օրինակ պատմամշակութային, կրոնական, գաստրոնոմիական, կամ ագրո, էկո, արկածային և գաստրոնոմիական, ու նման այլ համադրություններով զբոսաշրջային երթուղիներ տարբեր օրերի տևողությամբ: Գործող զբոսաշրջային տուրերը չեն ընդգրկում բոլոր վայրերը: Հետաքրքիր կլինի նաև մշակել առանձին ուխտագնացության կամ կրոնական տուրեր դեպի վանական համալիրներ ու եկեղեցիներ, էկոտուրեր դեպի բնության հատուկ պահպանվող տարածքներ, ագրոտուրեր (մասնակցություն գյուղատնտեսական, բերքի հավաքման, հողի մշակման և այլ աշխատանքների՝ կախված տարվա եղանակից), փառատոնային տուրեր (մասնակցություն Արցախում անցկացվող որևէ փառատոնի), գաստրոտուրեր (ազգային ուտելիքների պատրաստման վարպետության դասերի, համտեսի ընդգրկմամբ), պատմամշակութային տուրեր (Արցախում գործող թանգարանների, պատմամշակութային հուշարձանների ընդգրկմամբ), և այլն:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ Արցախն իր պատմությամբ ու մշակույթով ունի զբոսաշրջության զարգացման մեծ ներուժ, որը պետք է պատշաճ ներկայացնել և գրավել զբոսաշրջիկներին: Զարգացման լուրջ խոչընդոտ է արտերկրի հետ օդային կապի բացակայությունը և Ադրբեյջանի հետ ունեցած հակամարտությունը: Զբոսաշրջությունը կնպաստի Արցախի տնտեսության զարգացմանը, ինչպես նաև միջազգային ճանաչման ընդլայնմանը, ուստի անհրաժեշտ է համալիր միջոցառումների իրականացում վերը նշված ուղղություններով:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. ԱՀ վիճակագրական տարեգիրք, 2019, էջ՝ 40, [http://stat-nkr.am/files/yearbooks/2019/4\\_%20naselenie\\_36-57.pdf](http://stat-nkr.am/files/yearbooks/2019/4_%20naselenie_36-57.pdf), (Վերջին մուտքը՝ 10.02.2020):

2. Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին ԼՂՀ օրենք, Հոդված 2, 4, ընդունված 24 նոյեմբերի, 2004թ., <http://arlexis.am/DocumentView.aspx?DocID=6000>, (Վերջին մուտքը՝ 10.02.2020):

3. ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ, հունվար-դեկտեմբերին էջ՝ 82-83, [http://stat-nkr.am/files/publications/2018/Doklad\\_2018\\_hunvar\\_dektember/82-84-4\\_3\\_michazgajin%20zbosashrchik\\_17.pdf](http://stat-nkr.am/files/publications/2018/Doklad_2018_hunvar_dektember/82-84-4_3_michazgajin%20zbosashrchik_17.pdf), էջ՝ 35-37, [http://stat-nkr.am/files/publications/2018/Doklad\\_2018\\_hunvar\\_dektember/33-37-1\\_2\\_6\\_arevtur%26carayutyun%20nor.pdf](http://stat-nkr.am/files/publications/2018/Doklad_2018_hunvar_dektember/33-37-1_2_6_arevtur%26carayutyun%20nor.pdf), (Վերջին մուտքը՝ 10.02.2020):

4. Արցախ այցելած զբոսաշրջիկների թիվն աճել է 46.7%-ով. նախարար, 2020, [https://artsakhpress.am/arm/news/119929/?fbclid=IwAR2fBj1nNCrrbk5mtqWD58IEvOcsqaN5xKNtm\\_DEt-IQ5sUJbuOv92KuTWk](https://artsakhpress.am/arm/news/119929/?fbclid=IwAR2fBj1nNCrrbk5mtqWD58IEvOcsqaN5xKNtm_DEt-IQ5sUJbuOv92KuTWk), (Վերջին մուտքը՝ 10.02.2020):

5. ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009-2018թթ. հրապարակումներ, <http://stat-nkr.am>, (Վերջին մուտքը՝ 10.02.2020):

6. Արցախի Հանրապետության Վճարային հաշվեկշիռը 2015-2018 թթ., էջ՝ 19, [http://stat-nkr.am/files/publications/2019/vcharayin\\_hashiv\\_2018.pdf](http://stat-nkr.am/files/publications/2019/vcharayin_hashiv_2018.pdf), (Վերջին մուտքը՝ 10.02.2020):

7. ԼՂՀ վճարային հաշվեկշիռ 2014-2015թթ., էջ՝ 22-23, [http://stat-nkr.am/files/publications/2016/vcharayin\\_hash\\_2015.pdf](http://stat-nkr.am/files/publications/2016/vcharayin_hash_2015.pdf), (Վերջին մուտքը՝ 10.02.2020):

8. ԼՂՀ վճարային հաշվեկշիռը 2016թ., էջ՝ 18-19, [http://stat-nkr.am/files/publications/2017/vcharayin\\_hashv\\_2016.pdf](http://stat-nkr.am/files/publications/2017/vcharayin_hashv_2016.pdf), (Վերջին մուտքը՝ 10.02.2020):

9. Տեղեկատվությունը տրամադրել է Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչությունը:

10. Զեկույց զբոսաշրջության ոլորտում անցկացված ընտրանքային հետազոտության, Ստեփանակերտ, Հոկտեմբեր 2019թ., էջ՝ 10-36, <http://stat-nkr.am/files/publications/2019/Zbosashrjutyun.pdf>, (Վերջին մուտքը՝ 10.02.2020):

11. ԱՀ օրենքը ԱՀ 2019 թ. պետական բյուջեի մասին, ընդունված 2018 թ. դեկտեմբերի 20-ին, <http://arlexis.am/>, (Վերջին մուտքը՝ 10.02.2020):

12. ԱՀ օրենքը ԱՀ 2020թ. պետական բյուջեի մասին, ընդունված 2019 թ. դեկտեմբերի 19-ին, <http://www.nankr.am/hy/3567>, (Վերջին մուտքը՝ 10.02.2020):

13. Ճանապարհի թրեյլ, բերքի տոն, ժենգլայով հացի փառատոն. Արցախն ընդլայնում է զբոսաշրջային հնարավորությունը, 2020, [https://armenpress.am/arm/news/1003535.html?fbclid=IwAR2ycleEavhBLvO\\_WfgKBaR1tnB7U5aU1NF7OfvHpheXDsmhHZAMxjM1qwk](https://armenpress.am/arm/news/1003535.html?fbclid=IwAR2ycleEavhBLvO_WfgKBaR1tnB7U5aU1NF7OfvHpheXDsmhHZAMxjM1qwk), (Վերջին մուտքը՝ 10.02.2020):

14. **Հակորյան Թ.**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 2007, էջ 7-8:

15. Հունոտի կիրճ. Արցախի գեղեցկուհիներից մեկը, [www.hushardzan.am](http://www.hushardzan.am), (Վերջին մուտքը՝ 10.02.2020):

16. Արցախի սպիտակաթև չրջիկների միակ հանգրվանը, 2016, <https://hushardzan.am/archives/12360>, (Վերջին մուտքը՝ 10.02.2020):

17. Ճանապարհորդություն դեպի Արցախ. վայրեր Շուշիում, որոնց մասին Դուք չգիտեիք և որոնք անպայման պետք է տեսնել, 2016, <https://www.orer.am/?p=219936&l=am>, (Վերջին մուտքը՝ 10.02.2020):

18. Ազոխի քարանձավ, <http://findarmenia.org/arm/sights/azokh>, (Վերջին մուտքը՝ 10.02.2020):

19. Շահումյանի շրջանի Զուարի Տաք Զուր, 2016, <https://aartsakh.wordpress.com>, (Վերջին մուտքը՝ 10.02.2020):

20. Կաշաղակաբերդ ժայռագագաթ բնության հուշարձանի անձնագիրը հաստատելու մասին ԼՂՀ կառավարությանն առընթեր Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետի հրաման, 14 հուլիսի, 2015 թ., <http://mnp.nkr.am/wp-content/uploads/2018/10/9.pdf>, (Վերջին մուտքը՝ 10.02.2020):

21. Արցախի խորհրդանիշը՝ «Պապիկ-տատիկի» հուշարձանը, <http://history.armenpress.am/photos>, (Վերջին մուտքը՝ 10.02.2020):
22. Արցախի ամենատարեց ծառը, 2016, <https://hushardzan.am/archives/10372>, (Վերջին մուտքը՝ 10.02.2020):
23. Արցախում գտնվել են Մելիքների տապանաքարեր, 2017, <https://hushardzan.am/archives/15084>, (Վերջին մուտքը՝ 10.02.2020):
24. Տողում կայացել է արցախյան գինու 6-րդ փառատոնը. մասնակցում էին երեք տասնյակից ավելի գինեգործներ (ֆոտո), 2019, <https://news.am/arm/news/534711.html>, (Վերջին մուտքը՝ 10.02.2020):
25. Կրոնական, <http://www.pranatour.am/hayastan.html>, (Վերջին մուտքը՝ 10.02.2020):
26. Անկախությունից ի վեր Արցախում 12 եկեղեցի է կառուցվել, 4-ի շինարարությունն էլ ընթացքում է, <https://hetq.am/arm/news/64015/ankakhutyunic-i-ver-arcakhum-12-ekexeci-e-karucvel-4-i-shinararutyunn-el-yntacqum-e.html>, (Վերջին մուտքը՝ 10.02.2020):
27. Արցախի Հանրապետության կառավարության 2018թ. մայիսի 11-ի N 346-Ն որոշում, <http://mnp.nkr.am/wp-content/uploads/2018/07/Kanach-arcax.pdf>, (Վերջին մուտքը՝ 10.02.2020)
28. Ցանկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնության հուշարձանների, <http://mnp.nkr.am/images/ayl/hush.pdf>, (Վերջին մուտքը՝ 10.02.2020)

---

## ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ТУРИЗМА В АРЦАХСКОЙ РЕСПУБЛИКЕ ГАЯНЕ ТОВМАСЯН

---

*Академия государственного управления Республики Армения*

---

Целью данной статьи является анализ перспектив развития туризма в Арцахе и возможностей расширения армяно-арцахских туристических связей. В статье представлено состояние туризма в Арцахе, основные этапы маркетинга, а также обсуждены религиозные и историко-культурные объекты, имеющие большое туристическое значение. В целях комплексного анализа вопросов развития туризма был проведен SWOT-анализ, в результате которого были сделаны ряд предложений.

**Ключевые слова:** туризм, маркетинг, достопримечательности, SWOT-анализ, Арцах.

## TOURISM DEVELOPMENT PERSPECTIVES IN THE REPUBLIC OF ARTSAKH GAYANE TOVMASYAN

---

*Public Administration Academy of the Republic of Armenia*

---

The purpose of this article is to analyze the prospects of tourism development in Artsakh and the opportunities for expanding the Armenia-Artsakh tourism links. The article presents the current state of tourism in Artsakh. In addition, the main marketing steps, religious, historical and cultural sites of major tourist importance are discussed. A SWOT analysis was implemented for the complex analysis of tourism development problems and as a result numerous suggestions have been made.

**Keywords:** tourism, marketing, attractions, SWOT analysis, Artsakh.

Ներկայացվել է խմբագրություն 18.02.2020  
Երաշխավորվել է տպագրության 12.03.2020